

ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՄ

Միջին դասակարգի քաղաքացիական կենցաղավարուկները աւելի ապահով ու հանգիստ է, քան այլ դասակարգիները: Եթէ մէկը խիստ ցած դասակարգ է, ուրիշներ կ'իշխեն անոր վրայ, ուստի միշտ նեղուկեան ու վիշտերու մէջ է: Եթէ խիստ բարձր դասակարգ է, ինք կ'իշխէ ուրիշներու վրայ, ուստի շարունակ թշնամութիւն կը կրէ նախանձողներէն: Իսկ ան որ միջին դասակարգի յատուկ կեանք կ'ապրի, ո՛չ լիովին ընկճուած է մէկու մը իշխանութեան տակ՝ որպէս նուաստ մէկը, ո՛չ ալ նախանձողներէն թշնամութիւն կը կրէ որպէս իշխանաւոր: Ուստի միշտ խախտող ու անվրդով է՝ բաւարարուելով չափաւորով:

Սրտի տրտմութիւն է շատ իղձեր ունենալ ու սակաւին հասնիլը, հոգիի բերկրանք է սակաւ իղձեր ունենալ ու շատին հասնիլը: Ուստի ոչ ոք թող շատ ստացուածք կամենայ, որպէսզի չունենայ ու պարագային չտրտմի, այլ սակաւ ու անհրաժեշտ բաներու մասին մտածէ, որոնք ձեռք բերելը դիւրին է: Եւ եթէ պատահի, որ շատին հասնի այն ատեն անոր հոգին բերկրանք կ'ապրի:

«Լաւ է պատառ մը համով հացը՝ խաղաղութեամբ, քան բարիքներով տունը՝ թշնամութեամբ:» (Առակ. 17.1)

«Մեծ շահ է Աստուածապաշտութիւնը՝ գոհութեան զգացումով հանդերձ:» (Ա.Տիմ. 6.6)

ՎԵՐՋ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԴԵԻՆԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ԿԱԽԱՐԳՈՒԹԵԱՆ ՀՆՏԵՒԱՆՔՆԵՐ

ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ


Սարսափելի մտածումներ կան Վիւրթեմպերկէն ստացուած նամակի մը մէջ. «Ես ծանր փորձութեան ենթարկուեցայ, որմէ ձերբազատուիլ չեմ յաջողիր»: Կ'ուզէի Աստուծոյ օգնութիւն հայցել, բայց անսպասելիօրէն շնջացի. «Միրելի սատանայ ազատէ՛ գիս, օգնէ՛ ինձի»: Այդ պահէն սկսեալ կեանքս շղթայուեցաւ ծանր կապանքներով եւ ես մինչեւ հիմա անոնց ազդեցութեան տակ եմ: Կեանքս կործանած է: Օ՛, մութ ուժեր, սրբապիղծ մտածումներ: Հակառակ թախանձանքներուս՝ անոնք երբեք չեն հեռանար ինձմէ: Այդ մտածումները օր ու գիշեր հանգիստ չեն տար ինձի: Աստուծոյ Զոհին՝ Քրիստոսի Արիւնը չի՞ մաքրեր եւ Սուրբ Հոգին չէ՞ կենդանացներ գիս: Անպատակ օրեր կ'անցնեմ, հոգիս անպատմելի տրտմութեամբ ու ցաւով լեցուն է: Միաժամանակ, սրբապիղծութեան ոգին, որուն միջոցաւ յաճախ Աստուծոյ անունը կը պղծուի միշտ հետս է: Սրտիս մէջ մութ, աղտոտ գաղափարներ կ'իշխեն: Կարելի չէ՞ փշրել այդ ծանր կապանքները: Ես անչափօրէն կ'ուզեմ մաքուր սիրտ ունենալ եւ ամբողջապէս նուիրուիլ Աստուծոյ, հետեւիլ Իրեն: Ա՛յս է միակ փափաքս»:

Բոլոր անոնք որոնք կախարդութիւնն ու գուշակութիւնը անմեղ բան կը համարեն...

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԵՆՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119.105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 22 ՅՈՒՆԻՍ, 2012 ԹԻՒ 30

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄՆՏՁԵՆՈՒՄ 18.10.14

Զգոյ՛ջ, մի՛ արհամարհե՛ք այս փոքրիկներէն ունէ մէկը. գիտցէ՛ք որ անոնց հրեշտակները երկիմբի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս, որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար:

Ի՞նչ կը կարծէ՛ք. եթէ մարդ մը իր հարիւր ոչխարներէն մէկը կորսընցնէ, չի՞ ձգեր ինքսունիւնը ոչխարները լերան վրայ եւ չերթա՞ր փնտռելու կորսուած ոչխարը: Այո՛, կ'երթայ: Եւ եթէ պատահի որ գտնէ վստահ եղէ՞ք որ աւելի կ'ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ իննիսունիւնը ոչխարներուն համար, որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ երկիմբի մէջ է չ'ուզեր որ այս փոքրիկներէն մէկը կորսուի:

- Այս հատուածին մէջ կը կարդանք երկու բաժիններ.
- 1.- Մեր վերաբերմունքը փոքրիկներուն հանդէպ, ուր Քրիստոս կը թելադրէ եւ կը զգուշացնէ մեզի, որ չարհամարիտներ զանոնք: Մեր գուրգուրանքը պէտք է ըլլայ այնպէս ինչպէս որ Քրիստոս ինք կը գուրգուրար փոքրիկներուն: Յատուկ տեղ պէտք է ունենան անոնք մեր կեանքին մէջ, որովհետեւ անոնք իրենց յատուկ տեղը ունին Աստուծոյ մօտ:
 - 2.- Կորսուած ոչխարին օրինակը: Քրիստոս որպէս ճշմարիտ հովիւ փնտռեց իր կորսուած ոչխարը, իր կեանքը զոհեց այդ ոչխարը վերադարձնելու իրեն: Այսօր եւս կան կորսուած ոչխարներ երկրի վրայ Քրիստոս կը փնտռէ այդ կորսուած ոչխարները: Մենք եւս իբրեւ օգնականներ Քրիստոսի, պարտականութիւն ունինք իրեն հետ փնտռելու կորսուածը եւ վերադարձնելու ճշմարիտ բնակարանը՝ Աստուծոյ մօտ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԿԻՊՐԻԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՅՈՒՍԵՖԱՆԷ ԿՈՅՍ

Սուրբերու վկայաբանութեան մէջ երկու Կիպրիանոս կը յիշուին, երկուքն ալ Գ. դարուն ապրող, մին՝ Կարֆեղոնացի եկեղեցւոյ վարդապետ, նահատակուած 225-ին, Վաղերիանոսի եւ Գաղիանոսի օրով. միւսը՝ Անտիոքացի, մոգութեանէ ֆրիստոնէութեան դարձած, նահատակուած 285-ին, Դիոկղետիանոսի օրով:

Գրիգոր Աստուածաբան եւ ուրիշներ կը կարծեն սակայն թէ միեւնոյն Ափրիկեցի Կիպրիանոսն է, որ առաջ Հեթանոսաց փիլիսոփայ եւ ֆարսաբախոս, ֆուրմ եւ մոգ էր: Կարֆեղոնի ուզեց կախարդել Յուստիանէ անունով ֆրիստոնեայ օրիորդ մը, որպէսզի գայն հեթանոս երիտասարդի մը հետ ամուսնացնէ: Երբ չյաջողեցաւ, ինքն ալ ընդունեց անոր կրօնքը, մկրտուեցաւ եւ յառաջանալով եկեղեցական աստիճաններու մէջ Կարֆեղոնի եպիսկոպոս դարձաւ Յուստիանէն ալ, որ վանքի մը մէջ առանձնացած էր՝ սարկաւագուհի ձեռնադրելով:

Դեկոս կայսեր հալածանքի միջոցին դատուեցաւ եւ աքսորուեցաւ. ապա Վաղերիանոսի օրով գլխատուեցաւ, իսկ կոյսը եռացած տապակի մէջ մահացաւ:

Կիպրիանոս նշանաւոր եղած է իրբեւ քաջ հովիւ եւ իմաստուն գլուխ:

Ժանտախտի մը միջոցին ան պարզեց առաքիմութեան սեփանքի օրինակներ իր բարեպաշտութեամբ, անձնութեամբ եւ աղատներու հանդէպ սերով, որոնց բաշխեց իր ընտանեկան հարստութիւնը, սիրելի ըլլալով բոլորին: Ափրիկէի ուրիշ եպիսկոպոսներու հետ՝ մերժեց Հեթանոսներու մկրտութիւնը եւ այս պատճառաւ բախեցաւ ընդհանուր հակառակութեան, եւ ինքն իսկ անոր համար ատեն մը տկարացած նկատուեցաւ հաւատքի մէջ. բայց իր նահատակութիւնը սրբագործեց իր անձը:

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Սո՛ւրբ Աստուած, անմահ եւ հօրդուն որ սրբաբանութեամբ ու անդադրում օրհնաբանութեամբ կը պաշտուիս հրեղէն եւ անմարմին հրեշտակներուն կողմէ: Մենք, քու ձեռքովդ ստեղծուած բանաւոր հօտդ, քու առատարաշխ գթութիւնդ կը հայցենք:

Ընդունէ՛ մեր շրթներէն ու մեր սրտերէն դուրս եկած բանաւոր ընծաները:

Ո՛վ Տէր, մեր միտքերուն մաքրութիւն տուր, սրտերուն՝ զղջում, շրթներուն՝ ճշմարտութիւն, աչքերուն՝ արցունք, հոգիներուն՝ ամբօղութիւն, եւ մարմիններուն սրբութիւն:

Լեցո՛ւր մեզ ամէն առաքինութեամբ, պայծառ հաւատքով, աներկբայ յոյսով եւ մաքուր սիրով: Եւ զարդարէ՛ մեզ՝ խոհեմութեամբ, ողջախոհութեամբ, արիւթեամբ եւ արդարութեամբ:

Զօրացո՛ւր մեզ, որպէսզի յաղթող ըլլանք Բանսարկուհին հնարքներուն դէմ, կարենանք մարել Զարին բոլոր միտքող նետերը, եւ արդարութեամբ եւ աստուածապաշտութեամբ պարիլ աշխարհի մէջ, ինչպէս որ դո՛ւն կը կամենաս, իսկ այս կեանքէն ետք անձառելի բարիքներդ կարենանք վայելել քեզի՝ Տիրոջդ հետ, որո՛ւն կը վայելեն փառքն ու գօրութիւնը յաւիտեանս: Ամէն:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՆԱՄԱԿ ԱՂՔԱՏՆԵՐՈՒ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, ո՞ւր է հարուստներու ուրախութիւնը եւ կամ անոնց մխիթարութիւնը, ո՞վ աղքատ, որ կը ցանկաս եւ կը տենջաս եւ կը տխրեցնես քու հեշտ եւ խաղաղ կեանքդ, ինքզինքդ դժբախտ մը եւ թշուառկամ մը կը նկատես եւ կ'արհամարհես քու թանկագին հաստատութիւնդ: Գողերէն վախնալու կարիքը չունիս եւ ոչ ալ աւագակներէն երկիւղելու. պէտք չունիս մտահոգուելու ո՛չ դաշտին խոտերով եւ ոչ ալ լեռներու արօտավայրերով. պէտք չունիս հովիւներու նենգութենէն վախնալու եւ ոչ ալ գազաններու յափշտակութենէն. պէտք չունիս բռնաւորներու բռնութիւններէն եւ ոչ ալ իշխաններու կալանքներէն դողալու. նախանձոտները չեն նախանձիր քեզի, քսակահատները չեն խաբեր քեզ, ոչ ոք է կը վախնաս եւ ոչ ալ կ'անհանգստանաս. իշխաններու վախը եւ տէրերու բարկութիւնը չեն կրնար սարսափեցնել աղքատը, ոչ ոք կրնայ կողոպտել աղքատը եւ կամ նեղել գայն եւ սպառնալ անոր: Հարուստը անհանգրստացած է եւ անգանգի տակ կը գտնուի, իսկ աղքատը կը ծաղրէ գայն. հպարտ իշխանը անբարտաւան է հարուստին նկատմամբ, իսկ աղքատը անկարեւոր կը նկատէ գայն. երկիրը լեցուն է գողերով եւ աւագակներով, բայց աղքատը չի վախնար անոնցմէ. հրապարակները լեցուն են քսակահատներով եւ բռնաւորներով, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով. դատաւորները գայլ եւ գազան դարձած են, բայց աղքատը չի մտահոգուիր անոնցմով, որովհետեւ, չքաւորութեան պատճառաւ, իր կեանքը մեծապէս խաղաղ է, գերծ մտահոգութիւններէ, ազատ բոլորին դիմաց, առանց վախի, առանց նախանձի, առանց ոխի եւ հեռու շատ մը մոլութիւններէ:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ

Անիկա ջորի ճամբաները տնկուած ծառի պէս պիտի ըլլայ, որ իր ժամանակին իր պտուղը կուտայ: (Մադւնոս 1.3):

Աստուածապախ մարդիկ Աստուծոյ խօսքին մէջ նմանցուած են գետերու եզերքը տնկուած առողջ ծառերու, որոնք առատ պտուղ կ'արտադրեն եւ շատ տերեւ ունին: Պտղատու ըլլալու համար հաւատացեալները պէտք է՝-

Ա) Ամբասիր նկարագիր ունենան: Մարդիկ կը սիրեն տեսնել անհատներ որոնց նկարագիրը պարկեշտութիւն կ'արտայայտէ եւ որոնց կեանքը արատաւորուած չէ մեղքով:

Բ) Զօրաւոր ըլլան: Անոնք որոնք քաջածանօթ են Աստուծոյ խօսքին ճշմարտութիւններուն, զօրաւոր կ'ըլլան կեանքի դժուարութիւններուն եւ փորձութիւններուն մէջ:

Գ) Աճումի ընթացքին մէջ գտնուին: Ինչպէս առողջ ծառը կ'աճի եւ իւրաքանչիւր տարի շրջանակ մը կ'աւելցնէ իր բունին վրայ, նոյնպէս ալ հաւատացեալներ պէտք է աճին Տիրոջ շնորհքին մէջ (Բ. Պետ. 3-18):

Դ) Օրհնութեան միջոց ըլլան ուրիշներու: Կարգ մը ծառեր ուտելիք կը հայթայթեն, ուրիշներ շուք կու տան, ոմանք ալ որպէս փայտ գործածուելու կը ծառայեն: Հաւատացեալներ պէտք է հոգեւոր սնունդ, մխիթարութիւն եւ քաջախրութիւն հայթայթեն իրենց շրջանակին:

Ե) Պատրաստ ըլլան տեղափոխուելու երբ Աստուած կանչէ: Մենք սահմանուած չենք երկրի վրայ մնալու: Մենք կը սպասենք որ հասնի ժամանակը երկինքի պարտէզին մէջ տնկուելու:

Արդեօք ի՞նչ տեսակ ծառ մըն ես դուն: Քննէ՛ անձդ, ապա խնդրէ՛ Աստուծմէ որ քեզ պտղատու ծառ մը ընէ իր փառքին համար:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳԻՐՔԵՆ
3.16- -4.1

Այսպէս կ'ըստ Տէրը. *«Քանի որ Սիոնի աղ-
ջիկները հպարտացան, բարձրավիզ կը քա-
լեն, ցանկալից ակնարկներ կը նետեն, ման-
րաքայլ կը շարժին եւ ցատկոտելով կը քա-
լեն, որպէս պատիժ՝ պիտի նուաստացնեն
Սիոնի իշխանուհիները եւ գիրենք պիտի
մերկացնեն իրենց զարդերէն»:*

Այն օրը տէրը պիտի հանէ անոնց փա-
ռաւոր զգեստները եւ ոտքերուն մեհեւանդ-
ները, մազի հիւսքերը, գլխազարդ ծամա-
կալներն ու պսակակալները եւ վզի մահիկ-
ները, ճակատի գինդերը, օղերը, ապարան-
ջաներն ու շղարշէ շալերը, ապառօշները,
քօղէքներն ու մետաքսէ գօտիները, անու-
շահոտերու տուփերը, յուռութները, մատա-
նիներն ու քթամանեակները, դիպակէ
պատմուճանները, վերարկուները, թիկնոց-
ները եւ ձեռնապայուսակները, հայելիները,
բեհեզէ զգեստները, խոյրերն ու քօղերը:

Իրենց հպարտանքին փոխարէն՝ անու-
շահոտութեան տեղ գարշահոտութիւն պի-
տի ունենան, մէջքի կամարներուն տեղ՝
չուանէ գօտի, գեղեցկահիւս մագերու տեղ՝
կնտութիւն, ոսկեհիւս դիպակներու տեղ
քուրծ պիտի հազնին եւ գեղեցկութեան տեղ
ամօթ պիտի ունենան:

Անոնց սիրելի եւ գեղեցիկ զաւակները
սուրով պիտի իյնան, իրենց կտրիճները
պատերազմի մէջ պիտի սպաննուին: Ջար-
դերու արկղները անարգութեան ու սուգի
տապան պիտի ըլլան եւ անոնք պիտի մնան
լքուած, առանձին եւ իրենց քիթերը գետին
պիտի քսուին:

Այն օրը եօթը կին մէկ այր մարդ պիտի
բռնեն եւ ըսեն. *«Մենք մեր հացը կը գտնենք
եւ հագուստները կը հոգանք. միայն քու
անունդ տուր մեզի, անամուսնութեան նա-
խատիւնքը վերցուր մեր վրայէն»:*

Շարունակել Աստուածաշունչէն

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ
ԿՈՐԻՆՔԱՅԻՆԵՐՈՒՆ
1.25-30

Աստուծոյ տնօրինութիւնը, որ
յոյներ յիմարութիւն կ'որակեն,
իմաստնագոյնն է քան մարդկային
որեւէ իմաստութիւն. եւ Աստուծոյ
խաչը, որ հրեաներ տկարութիւն
կը համարեն, աւելի զօրեղ է քան
մարդկային ամէն զօրութիւն:

Եղբայրներ, դուք ձեզմէ դա-
տեցէք. ինչ էիք երբ Աստուած ձեզ
կանչեց: Ձեզմէ քանի՞ն իմաստուն,
հզօր կամ ազնուատոհմ էին
մարդկային չափանիշներով: Բայց
Աստուած դիտմամբ ընտրեց այն
ինչ որ այս աշխարհը յիմար եւ
անիմաստ կը գտնէ, անով իմաս-
տունները ամօթով ձգելու համար.
ընտրեց այն ինչ որ այս աշխարհը
տկար կը համարէ, անով հզօրնե-
րը անչցնելու համար. եւ ընտրեց
այն ինչ որ այս աշխարհը անար-
ժէք, արհամարհելի եւ ոչնչութիւն
կը նկատէ, անով ոչնչացնելու
համար այս աշխարհի մեծութիւն-
ները: Եւ ասիկա՝ որպէսզի ոեւէ
մարդ չպարծենայ Աստուծոյ առ-
ջեւ, որովհետեւ Աստուած ինքն է
որ ձեզ բերաւ Քրիստոսի միացուց,
եւ մենք Քրիստոսով ճանչցանք
Աստուծոյ իմաստութիւնը եւ
գտանք մեր արդարութիւնը,
սրբութիւնը եւ փրկութիւնը:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑՄՆՈՒԹԻՒՆԸ
ՍՍՏՈՒՄԾԱՇՈՒՄՆԵՐ: